

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Թ.54

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի

01.06.2011թ.կայացած խորհրդի նիստից:

ՕՐԱԿԱՐԳ

- 1. Պետական-ավարտական քննությունների արդյունքների քննարկում
- 2. Ընթացիկ հարցեր

1-ին հարցի վերաբերյալ

ԼՄԵՑԻՆ - Ֆակուլտետի դեկան Վ.Դումանյանը պետական-ավարտական քննությունների արդյունքները ընդհանուր առմամբ համարեց բավարար և առաջարկեց մատնանշել առկա թերությունները հետագայում դրանցից խուսափելու, քննությունները ավելի բարձր մակարդակով կազմակերպելու նպատակով:

«Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի» ամբիոնի ՊԶՀ նախագահ Յու.Շուքուրյանը իր ելույթում նշեց, որ մագիստրատուրայի 13 շրջանավարտներ պաշտպանել են մագիստրոսական թեզեր: Նրանցից 9 ուսանող ստացել է «գերազանց», իսկ 4 ուսանող «լավ» գնահատական: Ներկայացված աշխատանքների թեմաները արդիական էին և վերաբերվում էին ժամանակակից ուղղությունների: Մի քանի լավագույն աշխատանքներ ներկայացված են միջազգային գիտաժողովներին կամ որպես հոդված ներկայացվելու են տպագրության:

«Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի մագիստրոսական թեզերի պաշտպանության անցկացման համար ստեղծված պետական քննական հանձնաժողովի նախագահ Հ.Մարանջյանը իր ելույթում նշեց, որ ներկայացված թեզերը թողնում են շատ լավ տպավորություն: Պաշտպանությունը ավարտվել է հետևյալ արդյունքներով.

գերազանց	23 ուսանող
լավ	2 ուսանող
բավարար	1 ուսանող
անբավարար	1 ուսանող

Հ.Մարանջյանը ցանկություն հայտնեց, որ հետագայում հանձնաժողովի անդամներին տրամադրվեն համակարգիչներ, ընթացքում գնահատականները լրացնելու և վերջնական հաշվարկները անմիջապես կատարելու համար:

«Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի մագիստրոսական թեզերի պաշտպանության անցկացման համար ստեղծված պետական քննական հանձնաժողովի նախագահ Հ.Ղազարյանը իր ելույթում նշեց, որ ներկայացված թեզերը թողնում են շատ լավ տպավորություն, հատկապես առանձնացնելով ակադեմիկոս Գ.Բաղդասարյանի և բոցեմտ Ս.Մանուկյանի ղեկավարությամբ կատարված մագիստրոսական թեզերը: Պաշտպանությունը ավարտվել է հետևյալ արդյունքներով.

գերազանց	6 ուսանող
լավ	0 ուսանող
բավարար	1 ուսանող
անբավարար	0 ուսանող

Բակալավրիատի պետական քննական I հանձնաժողովի նախագահ Հ.Հայրապետյանը իր ելույթում ներկայացրեց պետական քննության և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Մաթեմատիկայի պետական քննության արդյունքներն են՝ 20 «գերազանց», 27 «լավ», 16 «բավարար»: Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝ 34 «գերազանց», 17 «լավ», 11 «բավարար»: Մի շարք ուսանողներ աչքի ընկան փայլուն պատասխաններով և կարող են դառնալ առաջնակարգ մասնագետներ, եթե մագիստրատուրայում ուսանելու տարիներին գտնվեն դասախոսների ուշադրության կենտրոնում: Շրջանավարտների որոշակի մաս, տիրապետելով տեսական նյութին դժվարանում է կիրառել այն կոնկրետ խնդիրներ լուծելիս: Այդ պատճառով Հ.Հայրապետյանը առաջարկեց հարցատոմսերի մեջ ընդգրկել որոշ «թեստային» գործնական խնդիրներ:

Բակալավրիատի պետական քննական II հանձնաժողովի նախագահ Ս.Մխիթարյանը իր ելույթում ներկայացրեց պետական քննության և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Մաթեմատիկայի պետական քննության արդյունքներն են՝ 25 «գերազանց», 15 «լավ», 22 «բավարար»: Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝ 31 «գերազանց», 12 «լավ», 19 «բավարար»: «Ընդհանուր մաթեմատիկա» առարկայից մի շարք ուսանողներ ցուցաբերել են կայուն հիմնավոր գիտելիքներ, ընդգծված մաթեմատիկական տրամաբանություն, մաթեմատիկական գաղափարների փոխկապակցությունների և ընդհանրացումների տիրապետում: Պաշտպանության ներկայացված ավարտական աշխատանքների մեծ մասը կատարված էր բարձր մակարդակով և ձևակերպված էր պատշաճ կերպով: Որպես թերություն կարելի է նշել այն հանգամանքը, որ մի շարք ավարտական աշխատանքներում հստակ ընդգծված չէին նորույթի տարրերը, բացակայում էին դիտարկված խնդիրների թվային իրականացումները և ծրագրային հավելվածները: Ս.Մխիթարյանը նշեց, որ պետական քննությունը և ավարտական աշխատանքների պաշտպանությունը ֆակուլտետի ղեկավարության կողմից կազմակերպվել էին պատշաճ մակարդակով:

2-րդ հարցի վերաբերյալ

Լսեցին - Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի ասիստենտ Վ.Գաբրիելյանի հեղինակած «Հանրահաշիվ և երկրաչափություն» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը:

Որոշեցին - «Հանրահաշիվ և երկրաչափություն» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ – 2011թ. ԵՊՀ ԻԿՄ ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ Գևորգ Խաչիկի Էլոյանի ասպիրանտուրա ընդունվելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ Գևորգ Խաչիկի Էլոյանին երաշխավորել ընդունվելու ասպիրանտուրա:

ԼՍԵՑԻՆ – 2011թ. ԵՊՀ ԻԿՄ ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ Հովհաննես Էլֆիկի Սարգսյանի ասպիրանտուրա ընդունվելու հարցը:

ՈՐ ՈՇԵՑԻՆ – Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ Հովհաննես Էլֆիկի Սարգսյանին երաշխավորել ընդունվելու ասպիրանտուրա:

ԼՍԵՑԻՆ – 2011թ. ԵՊՀ ԻԿՄ ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ Վարդան Հակոբի Թոփչյանի ասպիրանտուրա ընդունվելու հարցը:

ՈՐ ՈՇԵՑԻՆ – Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ Վարդան Հակոբի Թոփչյանին երաշխավորել ընդունվելու ասպիրանտուրա:

ԼՍԵՑԻՆ – 2011թ. ԵՊՀ ԻԿՄ ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ Սահակ Իգորի Կաղյանի ասպիրանտուրա ընդունվելու հարցը:

ՈՐ ՈՇԵՑԻՆ – Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ Սահակ Իգորի Կաղյանին երաշխավորել ընդունվելու ասպիրանտուրա:

ԼՍԵՑԻՆ – 2011թ. ԵՊՀ ԻԿՄ ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ Սուրեն Արտաշեսի Խաչատրյանի ասպիրանտուրա ընդունվելու հարցը:

ՈՐ ՈՇԵՑԻՆ – Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ Սուրեն Արտաշեսի Խաչատրյանին երաշխավորել ընդունվելու ասպիրանտուրա:

ԼՍԵՑԻՆ - Հայ – Ռուսական (Սլավոնական) համալսարանի կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի համակարգային ծրագրավորման ամբիոնի ասպիրանտ Լևոն Ռաֆայելյանի ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ՈՐ ՈՇԵՑԻՆ – Հաստատել ատենախոսության թեման՝ "Բազմաչափ միջարկում, հանգույցների ճշգրիտ կոնստրուկցիաներ" (Ա.01.07 Հաշվողական մաթեմատիկա):

Խորհրդի նախագահ

Վ.Դումանյան

Խորհրդի քարտուղար

Է.Դանոյան